

## ՀԱՅԵՐԻՆ ՄԻՄՅԱՆՑ ԿԱՊԵԼՈՒ ՀՎՀ-Ի ԸՆՁԵՌԱԾ ԲԱԶՄԱԹԻՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նարինե Ստեփանյանը Լուս Անջելեսում բնակվող փաստաբան է, ով մի շարք դատական գործեր է վարել աշխարհի տարբեր ծայրերից՝ Թուրքիայից մինչև նախկին Խորհրդային Միության երկրներ, ԱՄՆ-ում քաղաքական ապաստան ստանալու խնդրանքով իրեն դիմած բազմաթիվ հայերի համար:

Նա խոստովանում է, որ այս դիմումների համար ջանք ու եռանդ չի խնայել, որպեսզի դատարանները ճանաչեն այն բոլոր հետապնդումները, որ իրագործվել էին հայերի նկատմամբ էթնիկ և կրոնական պատկանելիության պատճառով:

Նարինեն ծնվել է Ադրբեջանի Բաքու քաղաքում, որտեղ էլ սերնդեսերունդ ապրել է իր ընտանիքը:

Անհերքելի է այն փաստը, որ Խորհրդային Միության մաս կազմող գրեթե բոլոր ազգային փոքրամասնությունները մեծամասամբ ռուսերեն լեզվով էին խոսում, հետևաբար, Նարինեն նույնպես հայերեն չգիտեր, քանի դեռ նրա ընտանիքն ապրում էր Բաքվում:

Ավելին, թե՛ Արբեջանում, և թե՛ Ռուսաստանում նա իր մաշկի վրա զգացել է հայերի հանդեպ իրականացվող խտրականությունները: Նա կատակով խոստովանում է, որ հայ ինքնության համար իր մղած պայքարը ձևավորել է իր իսկ բնավորությունը, և միգրացիոն դա է պատճառը, որ նա այսօր իրավաբան է: 1991 թվականին Նարինեն ընտանիքի հետ տեղափոխվեց Ման Ֆրանցիսկո, որտեղ հայկական համայնքն այդքան էլ մեծ չէ:

Նա բակալավրի կրթություն է ստացել Կալիֆորնիայի Բերկլի համալսարանում, որից հետո, 2001թ., ձեռք է բերել իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան Հաստինգսի իրավունքի բարձրագույն դպրոցում: Մինչև 2005թ. աշխատել է մի շարք իրավաբանական ընկերություններում, որից հետո հիմնադրել է իր իսկ իրավաբանական ընկերությունը:

2008թ. Նարինեն հանդիպում է իր ամուսնուն՝ Ժիլբերտին, որից հետո գույզը տեղափոխվում է Լուս Անջելես՝ այստեղի հայկական մեծ համայնքին ավելի մոտ լինելու համար: Նա շնորհակալ է ամուսնուն, որ իրեն սովորեցրեց հայերեն խոսել և քաջալերեց գրանցվել հայոց լեզվի դասընթացներին: Նարինեն և Ժիլբերտը երեք երեխա ունեն՝ Էդուարդը, Ռոբերտը և Քրիստինան: Նարինեի երեխաները հաճախում են տեղի հայկական դպրոցը, որտեղ հայերեն են սովորում:

*«Ես Բաֆֆի և Չարենց եմ կարդացել ռուսերենով, և ինձ մտահոգում էր այն փաստը, որ չէի կարող դրանք կարդալ հայերեն լեզվով: Չորս տարեկան որդիս՝ Էդուարդը, հիմա կարողանում է հայերեն կարդալ և նույնիսկ մաթեմատիկան է հայերեն լեզվով սովորում»*, - ասում է Նարինեն:

Երեխաների ծնվելուց հետո Նարինեն ինքնուրույն հայերեն կարդալ է սովորել, որպեսզի կարողանա երեխաների համար մանկական գրքեր կարդալ ամեն գիշեր: Սկզբում նա փորձում էր նախապես մի քանի անգամ կարդալ գիրքը, որ այնուհետև այն սահուն կարդալ երեխաների համար:

Համացանցում երկար փնտրտուքներից հետո նա վերջապես գտավ Հայկական վիրտուալ համալսարանը և անմիջապես գրանցվեց հայոց լեզվի դասընթացին. 2013-ի ապրիլին էր: Նա արդեն ավարտել է արևելահայերենի երեք դասընթաց: Հետագայում ցանկանում է նաև գրանցվել հայ գրականության դասընթացներին:

Նարինեն կարծում է, որ լեզուն դիմացիների մշակույթն ընկալելու բանալին է: *«Մշակույթը գանձերով լի տուփ է, և լեզուն է այն բանալին, որով հնարավոր է բացել այդ տուփը: Կարծում եմ, երբ սկսում ես կորցնել էթնիկ ինքնությունը, առաջին կորուստը լեզուն է լինում: Եթե չես սովորում լեզուն, ապա սկսում ես կորցնել կապն աշխարհի տարբեր ծայրերում ապրող այլ հայերի հետ և պարզապես նույն կերպ չես զգում այդ կապվածությունը»*, - ասում է նա:

Նարինեն հավելում է, որ ՀՎՀ-ն իրեն տվել է հայերեն սովորելու և իր բառապաշարը հարստացնելու բոլոր միջոցները: Նա նաև գտնում է, որ ՀՎՀ-ն աշխարհի բոլոր ծայրերում բնակվող հայերին հնարավորություն է ընձեռում պահպանել հայ ինքնությունը և պաշտպանել այն ձուլման վտանգից:

*ՀԲԸՄ Միլիկոն Վելի մասնաճյուղի նախաձեռնած Հայկական վիրտուալ համալսարանը (ՀՎՀ) աշխարհում հայկական օնլայն կրթություն տրամադրող առաջատար կառույցներից է: 2009թ.-ից գործող ՀՎՀ-ի վիրտուալ լսարանները բաց են հայկական կրթությանը հետաքրքրվողների համար: Հայոց լեզվի, պատմության, հայկական մշակույթի և շախմատի դասընթացները դասավանդվում են 7 լեզվով՝ արևելահայերեն, արևմտահայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն և թուրքերեն:*

*ՀՎՀ-ն վիրտուալ լսարաններով է ապահովում այն ուսանողներին, ովքեր հնարավորություն չունեն մասնակցելու ավանդական, դեմ-առ-դեմ դասավանդվող հայկական կրթական ծրագրերին՝ միաժամանակ օժանդակ նյութեր տրամադրելով նաև նրանց, ովքեր օգտվում են վերոնշյալ հնարավորություններից: Բոլորին այս յուրահատուկ աղբյուրից օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով դասերը հարմարեցված են ուսանողների անհատական պահանջներին՝ անկախ տարիքից, բնակչության վայրից կամ գիտելիքների մակարդակից:*

*Աշխարհում օնլայն կրթության վերջին զարգացումներին գուզընթաց՝ ՀՎՀ-ի առաքելությունն է ստեղծել օնլայն կրթական համայնք՝ ամրացնելով մշակութային, կրթական և սոցիալական կապերը ողջ աշխարհում: Մինչ օրս ՀՎՀ-ի դասընթացներին մասնակցել է շուրջ 3000 ուսանող ավելի քան 65 երկրից՝ ստանալով հայկական կրթություն՝ միշտ և ամենուր:*



Նարինե Ստեփանյանը ամուսնու և երեխաների հետ